



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

0010 ք.Երևան, Վ.Սարգսյան 5, Հեռ. (374010) 511711

**ՎԴ - Ե**

**«02» դեկտեմբերի 2019թ.**

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
ՏԻԿԻՆ ՎԱՐԴՈՒՀԻ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի տիկին Հովնանյան,

Ձեր կողմից 2019թ. նոյեմբերի 18-ին կայացված՝ թիվ ԼԴ/0006/16/19 դատական հանձնարարությունով Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին որոշման կապակցությամբ տեղեկացնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Նշված ընդհանուր կանոնից բացառությունները սահմանված են Օրենսգրքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներով, որոնք վերաբերում են այլընտրանքային, պայմանագրային և բացառիկ տարածքային ընդդատությանը:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս

պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել սույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածներով սահմանված կանոնների խախտմամբ:

Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

Սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Նույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Նշված նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև, որ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում հայցադիմումը կարող է ներկայացվել պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի դատարան:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով ընդհանուր տարածքային ընդդատության կանոնը սահմանել է դիսպոզիտիվ նորմով և հնարավորություն է նախատեսել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ կանոններ նախատեսված լինելու դեպքում կիրառել այդ կանոնները:

Այդուհանդերձ, եթե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է

ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 22-րդ, 24-րդ և 138-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ գործը պետք է հանձնի ըստ ընդդատության՝ հիշատակված նորմերում ամրագրված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ վերը նշված իրավակարգավորումների և ընդդատության ինստիտուտի բովանդակության համատեքստում, հարկ է նշել, որ գործն ըստ տարածքային ընդդատության հանձնելու և այն ստանալու իրավասությունները վերապահված են միայն առաջին ատյանի դատարաններին, այսինքն՝ **գործն ըստ ընդդատության ուղարկելու և ստանալու իրավահարաբերության պատշաճ սուբյեկտներ կարող են հանդիսանալ միայն առաջին ատյանի դատարանները:**

Գործն ըստ ընդդատության ուղարկելու իրավահարաբերության պատշաճ սուբյեկտից՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից, գործն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը յոթնօրյա ժամկետում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- գործը վարույթ ընդունելու մասին՝ դրանով իսկ հայտնելով իր համաձայնությունը գործի ընդդատության կապակցությամբ,
- գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ դրանով իսկ հայտնելով իր անհամաձայնությունը (վեճը) գործի տարածքային ընդդատության վերաբերյալ:

Միայն նշված օրենսդրական կարգի պահպանմամբ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկված լինելու դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը որոշում է այն դատարանին, որն ըստ տարածքային ընդդատության, իրավասու է իրականացնել գործի քննությունը:

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը, հարկ է փաստել, որ ընդդատությունը որոշելու նպատակով գործը Վճռաբեկ դատարանի նախագահին կարող է ուղարկվել միայն ներքոշարադրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. *Ընդդատության վերաբերյալ վեճ է ծագել գործն ուղարկող և այն ստացող դատարանների միջև,*
2. *Ընդդատության վերաբերյալ վեճը ծագել է բացառապես առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև,*

3. Գործն ըստ ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն առանց գործը վարույթ ընդունելու, առանց որևէ հետագա դատավարական գործողություններ կատարելու, սահմանված յոթնօրյա ժամկետում որոշում է կայացրել գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին:

Միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկված լինելու դեպքում է, որ Վճռաբեկ դատարանի նախագահը կարող է իրացնել Օրենսգրքի 26-րդ հոդվածով նախատեսված՝ գործի ընդդատությունը որոշելու իր լիազորությունը:

Սույն դեպքում «Վերխնեվոլժսկիյ կաշվի գործարան» բաժնետիրական ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՌԴ Տվերի մարզի Արբիտրաժային դատարան (այսուհետ նաև՝ Արբիտրաժային դատարան) ընդդեմ անհատ ձեռնարկատեր Վահե Մկրտչյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին (արբիտրաժային գործ N Ա66-8251/2017):

Արբիտրաժային դատարանի 05.07.2018թ. վճռով հայցային պահանջներն ամբողջությամբ բավարարվել են:

«Վերխնեվոլժսկիյ կաշվի գործարան» բաժնետիրական ընկերությունը 08.02.2019թ. դիմում է ներկայացրել Արբիտրաժային դատարան՝ 05.07.2018 թվականի N Ա66-8251/2017 գործով վճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և հարկադիր կատարումը թույլատրելու մասին:

Արբիտրաժային դատարանի 06.03.2019թ. որոշմամբ «Վերխնեվոլժսկիյ կաշվի գործարան» բաժնետիրական ընկերության միջնորդությունը բավարարվել է և ուղարկվել է Հայաստանի Հանրապետության իրավասու դատարան:

Դատական դեպարտամենտի ղեկավարի ԴԴ-1 Ե-8130 գրությամբ հիշյալ միջնորդությունը 11.09.2019թ. ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Դատարան):

Դատարանի (դատավոր՝ Վ. Հովնանյան) 20.09.2019թ. որոշմամբ նշանակվել է թարգմանիչ:

Դատական դեպարտամենտի ղեկավարի թիվ Ե-9861 գրությամբ 30.10.2019թ. Դատարան է ուղարկվել դատական գործի թարգմանված փաստաթղթերը:

Դատարանի 18.11.2019թ. որոշմամբ թիվ ԼԴ/0006/16/19 դատական հանձնարարությունն ուղարկվել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նորմին համապատասխան քննության առնելով գործը վարույթ ընդունելու կամ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին հարցը, գտնում է, որ այն պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին, քանի որ համաձայն չէ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի 11.09.2019 թվականի թիվ ԴԴ-1 Ե-1830 գրությամբ որոշված գործի տարածքային ընդդատությանը՝ հետևյալ պատճառաբանությամբ, գործը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 326-րդ հոդվածի 1-ին մասի, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 35-րդ հոդվածի իրավակարգավորման հիմքով ենթակա է քննության ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում»:

Փաստորեն, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը հիշյալ դատական հանձնարարությունը վճռաբեկ դատարանի նախագահին է ուղարկել Դատական դեպարտամենտի ղեկավարի 11.09.2019 թվականի թիվ ԴԴ-1 Ե-1830 գրության հետ անհամաձայնության հիմքով, փաստելով, որ այդ գրությամբ որոշվել է գործի տարածքային ընդդատությունը:

Դրանից բացի, թիվ ԼԴ/0006/16/19 դատական գործը վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկվել է նաև այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա է քննության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

Մինչդեռ, ինչպես արդեն վերը նշվեց, վճռաբեկ դատարանի նախագահին Օրենսգրքի 26-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ առհասարակ, ընդդատության վերաբերյալ առկա է վեճ գործն ուղարկող և այն ստացող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև:

Սույն դեպքում Դատական դեպարտամենտի ղեկավարի և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի միջև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համատեքստում չի կարող վեճ ծագել այն պարզ պատճառաբանությամբ, որ Դատական դեպարտամենտի ղեկավարը չի կարող հանդիսանալ գործն ըստ ընդդատության ուղարկելու իրավահարաբերության պատշաճ սուբյեկտ:

Ինչ վերաբերում է Դատական դեպարտամենտի ղեկավարի 11.09.2019 թվականի

թիվ ԴԴ-1 Ե-1830 գրությանը, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ դրանով Դատական դեպարտամենտի ղեկավարը, որոշակի չափանիշների հաշվառմամբ, ապահովել է գործի հետագա քննության իրականացումը և ոչ թե Օրենսգրքի 25-րդ հոդվածի իմաստով որոշել է գործի տարածքային ընդդատության հարցը:

Ինչ վերաբերում է սույն դատական հանձնարարությամբ իրավասու դատարանը որոշելու հարցին առհասարակ, ապա այդ կապակցությամբ հարկ է վերլուծել Օրենսգրքի 47-րդ գլխով նախատեսված՝ օտարերկրյա արբիտրաժի վճիռների ճանաչման և հարկադիր կատարման, Օրենսգրքի 52-րդ գլխով նախատեսված՝ օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթների առանձնահատկությունները:

Այսպես.

Օտարերկրյա արբիտրաժի վճիռների ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներով գործերի վարույթն իրականացվում է Օրենսգրքի 47-րդ գլխի կանոններով:

Մասնավորապես, Օրենսգրքի 326-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարերկրյա պետությունների տարածքում կայացրած արբիտրաժների և միջազգային առևտրային արբիտրաժների վճիռների (օտարերկրյա արբիտրաժային վճիռներ) ճանաչումն ու կատարումն իրականացնում է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դատարանը նույն օրենքով նախատեսված դեպքերում:

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով, 35-36.2-րդ հոդվածներով նախատեսված գործառույթներն իրականացնում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը:

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի՝ «Արբիտրաժային տրիբունալի վճռի ճանաչումը և կատարումը» վերտառությամբ 35-րդ հոդվածի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալի վճիռը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում, պետք է ճանաչվի որպես պարտադիր և համապատասխան դատարանին գրավոր միջնորդելու դեպքում կատարվի սույն հոդվածին և 36-րդ հոդվածին համապատասխան:

(...)

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կայացված արբիտրաժային վճիռները փոխադարձության սկզբունքով ճանաչվում և ի կատար են ածվում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ սույն օրենքին, այլ իրավական ակտերին և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան: Ընդ որում, փոխադարձությունը համարվում է առկա, եթե այլ բան ապացուցված չէ:

Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի 10.06.1958 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն Կոնվենցիան կիրառվում է այն արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման նկատմամբ, որոնք կայացվել են այն պետության տարածքում, քան այն պետությունը, որում հայցվում է այդպիսի որոշումների ճանաչումը և կատարումը՝ այն վճերով, որոնց կողմ կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Այն կիրառվում է նաև այն արբիտրաժային որոշումների նկատմամբ, որոնք ներքին որոշումներ չեն համարվում այն պետությունում, որտեղ հայցվում է դրանց ճանաչումը և կատարումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արբիտրաժային որոշումներ» տերմինը ներառում է ոչ միայն յուրաքանչյուր առանձին գործով նշանակված արբիտրների կայացրած արբիտրաժային որոշումները, այլև արբիտրաժային այն որոշումները, որոնք կայացվել են մշտապես գործող այն արբիտրաժային մարմինների կողմից, որոնց դիմել են կողմերը:

Իսկ ահա օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթն իրականացվում է Օրենսգրքի 52-րդ գլխի կանոններով:

Մասնավորապես, Օրենսգրքի 346-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերը ճանաչվում են, իսկ կատարում պահանջող դատական ակտերը նաև կատարվում են Հայաստանի Հանրապետությունում, եթե այդպիսի ճանաչումը և կատարումը նախատեսված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով կամ փոխադարձության հիման վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն ենթաբաժնի իմաստով՝ օտարերկրյա դատական ակտ է համարվում այլ պետության դատական մարմնի ընդունած եզրափակիչ

դատական ակտը՝ անկախ դրա անվանումից, որն ունի իրավական ուժ այն պետությունում, որտեղ կայացվել է, այդ թվում՝ օտարերկրյա դատարանի հաստատած հաշտության համաձայնությունները, արձակած դատական հրամանները և վճարման կարգադրությունները, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասով քրեական գործերով կայացրած դատավճիռները:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օտարերկրյա դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ենթակա է ճանաչման և կատարման, եթե այդ ակտով լուծվող վեճը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համարվում է քաղաքացիական, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով:

Օրենսգրքի՝ «Օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումները քննող դատարանները» վերտառությամբ 349-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է պարտապանի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

Եթե պարտապանը Հայաստանի Հանրապետությունում բնակության (գտնվելու) վայր չունի, կամ նրա բնակության (գտնվելու) վայրն անհայտ է, դիմումը ներկայացվում է պարտապանին պատկանող գույքի գտնվելու վայրի դատարան:

Եթե օտարերկրյա դատական ակտն իր բնույթով չի ենթադրում հարկադիր կատարում որևէ մեկ պարտապանի նկատմամբ կամ ընդհանրապես հարկադիր կատարում չի պահանջում, ապա այդպիսի ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է այն ներկայացնող անձի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

Եթե օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ոչ իրավասու դատարան, ապա վերջինս պարտավոր է սույն օրենսգրքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով այն հանձնել իրավասու դատարանին:

«Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի համադրված վերլուծության արդյունքում հարկ է փաստել, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը ենթադրում է



պետական իշխանության գերակայություն, ինքնուրույնություն և անկախություն, ինչն իր մեջ ներառում է նաև պետության ամբողջ տարածքում արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասությունը: Հետևաբար, օտարերկրյա դատական ակտերը, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների տարածքում կայացրած արբիտրաժների և միջազգային առևտրային արբիտրաժների վճիռները (օտարերկրյա արբիտրաժային վճիռներ) Հայաստանի Հանրապետությունում ինքնըստինքյան չեն կարող ունենալ իրավական գործողության այն հատկանիշները (պարտադիրություն, անհերքելիություն, կատարելիություն, նախադատելիություն), ինչ ունեն ներպետական դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

Միևնույն ժամանակ պետության ինքնիշխանությունը չի բացառում օտարերկրյա դատական ակտերի, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչը նախ և առաջ միջազգային համագործակցության դրսևորում է:

Կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտի, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչումն իրենից ներկայացնում է ՀՀ դատարանների կողմից այդ ակտերին այնպիսի իրավական հատկանիշների տրամադրում, որոնցով օժտված են Հայաստանի Հանրապետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, և թույլատրում այդ ակտի իրավական գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում: Այլ կերպ ասած՝ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտը, օտարերկրյա արբիտրաժային վճիռները միայն ճանաչման արդյունքում են Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերում պարտադիրության և կատարելիության հատկանիշներ:

Վերը նշվածով պայմանավորված՝ օրենսդիրը նախատեսել է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատական ակտերի, ինչպես նաև օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման կարգ՝ այդ ակտերի ճանաչման իրավասությունը վերապահելով ՀՀ դատարաններին:

Ընդ որում, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատական ակտերի, ինչպես նաև օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման կարգերի ընդհանրությունների հետ զուգահեռ, օրենսդիրը միաժամանակ այդ երկու ինստիտուտների համար սահմանել է նաև որոշակի տարբերություններ:

Այսպես.

Օրենսգրքի 326-րդ հոդվածի և «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 10.06.1958 թվականի կոնվենցիայի համատեքստում, օրենսդիրն Օտարերկրյա արբիտրաժային վճիռ է դիտարկում այլ պետության **դատական մարմնի մաս չհանդիսացող** արբիտրաժի վճիռը:

Այսինքն, Օրենսգրքի 326-րդ հոդվածով ղեկավարվելու, ներկայացված միջնորդությունը լուծելու համար անհրաժեշտ է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչման և կատարման ներկայացված լինի ոչ թե օտարերկրյա պետության դատական համակարգի մաս կազմող դատարանի (անկախ դատարանի անվանումից), այլ այդ համակարգից դուրս ձևավորված և այդ պետության դատական համակարգի տարր չհանդիսացող արբիտրաժի կողմից:

Միևնույն ժամանակ օրենսդիրը հստակորեն որոշել է նաև այն դատարանին, որն իրավասու է քննելու օտարերկրյա պետությունների տարածքում կայացրած արբիտրաժների և միջազգային առևտրային արբիտրաժների վճիռների (օտարերկրյա արբիտրաժային վճիռներ) ճանաչման և կատարման վերաբերյալ ներկայացված միջնորդությունները: Ընդ որում, հարկ է նշել, որ օրենսդիրն իրավասու դատարանի ընտրության հարցում չի առաջնորդվել դատավարության մասնակիցների շահի հաշվառման սկզբունքով և անկախ դատավարության մասնակիցների՝ հնարավոր դժվարությունները կանխելու նկատառումներից, իմպերատիվ նորմով սահմանել է, որ **օտարերկրյա արբիտրաժային տրիբունալի վճիռների Հայաստանի Հանրապետությունում ճանաչման և կատարման գործերով իրավասու դատարան է հանդիսանում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը:**

Իսկ ահա օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով օրենսդիրը սահմանել է այլ վավերապայմաններ:

Մասնավորապես, օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերը ճանաչվում են, իսկ կատարում պահանջող դատական ակտերը նաև կատարվում են Հայաստանի Հանրապետությունում այն դեպքում, եթե այդպիսի ճանաչումը և կատարումը նախատեսված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով կամ փոխադարձության հիման վրա:

Ընդ որում, Օրենսգրքի 52-րդ գլխի իմաստով՝ օտարերկրյա դատական ակտ է համարվում այլ պետության ոչ թե դատական մարմնից դուրս ձևավորված և այդ մարմնի մաս չհանդիսացող կառույցի, այլ հենց օտարերկրյա պետության **դատական մարմնի**

ընդունած եզրափակիչ դատական ակտը՝ անկախ դրա անվանումից:

Այսինքն, Օրենսգրքի 346-րդ հոդվածով ղեկավարվելու, ներկայացված միջնորդությունը լուծելու համար անհրաժեշտ է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչման և կատարման ներկայացված լինի օտարերկրյա պետության դատական մարմնի կողմից ընդունված եզրափակիչ դատական ակտը:

Միևնույն ժամանակ օրենսդիրը հստակորեն որոշել է նաև այն դատարանին, որն իրավասու է քննելու օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումները: Ընդ որում, հարկ է նշել, որ օրենսդիրն իրավասու դատարանի ընտրության հարցում առաջնորդվել է դատավարության մասնակիցների շահի հաշվառման սկզբունքով և որպես ընդհանուր կանոն, **Օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսել է, որ օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է պարտապանի բնակության (գտնվելու) վայրի դատարան:** Նշված կանոնից բացառությունները նախատեսված են նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով:

***Նույն հոդվածի 4-րդ մասով օրենսդիրը սահմանել է իմպերատիվ պահանջ, համաձայն որի՝ օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը ստացած ոչ պարզաճ դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով այն հանձնել իրավասու դատարանին:***

Վերոգրյալը հիմք է տալիս արձանագրելու, որ օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման ու կատարման և Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու իրավահարաբերությունների համար սահմանվել է էականորեն իրարից տարբերվող իրավական ռեժիմներ:

Օրենսգրքի 47-րդ գլխի կամ 52-րդ գլխի կանոնների ընտրության և հետևաբար, իրավասու դատարանի որոշման առումով, նման միջնորդություններ ստացած դատարանները, նախևառաջ պետք է պարզեն Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչման և կատարման է ներկայացվել օտարերկրյա պետության դատական մարմնի կողմից կայացված եզրափակիչ դատական ակտ, թե օտարերկրյա դատական համակարգի մաս չհանդիսացող և այդ համակարգից անջատ գործող արբիտրաժի վճիռ: Միայն նշված հանգամանքի բացահայտումը կարող է թույլ տալ ընտրելու ներկայացված միջնորդության քննության նկատմամբ կիրառելի իրավական

գործիքակազմը և որոշել գործի տարածքային ընդդատությունը:

Ամբողջ վերոգրյալի համատեքստում հարկ է փաստել, որ Վճռաբեկ դատարանի նախագահը չի կարող իրացնել Օրենսգրքի 26-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելիս չեն պահպանվել արդեն իսկ վերը թվարկված՝ ընդդատությունը որոշելու նպատակով գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու համար անհրաժեշտ վավերապայմանները, մասնավորապես՝ գործի տարածքային ընդդատության կապակցությամբ վեճ չի ծագել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և մեկ այլ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի միջև:

Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները, տեղեկացնում եմ, որ բարձրացված հարցի քննարկումը և լուծումը դուրս է Վճռաբեկ դատարանի նախագահի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված լիազորության շրջանակից, որպիսի պարագայում և բացակայում է բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից համապատասխան որոշում կայացնելու օրենսդրական հիմքը:

Կից ուղարկվում է թիվ ԼԴ/0006/16/19 դատական հանձնարարությունը՝ բաղկացած «136» թերթից:

**Հարգանքով՝**

**ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**